*Հավելված 6*

<<ՀՀ ԱՄԱՔ-ՊԸԱՇՁԲ-15/12>> *ծածկագրով*
*պարզեցված ընթացակարգի հրավերի*

# ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N <<ՀՀ ԱՄԱՔ-ՊԸԱՇՁԲ-15/12>>

ք. Արարատ <<29 >> <<հունիսի >> 2015 թ.

<< *Արարատի քաղաքապետարան* >>-ը, ի դեմս քաղաքապետ Հայկ Հայկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՆՆԱ>>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Անդրեասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված « Արարատ քաղաքի ՌԳԿ բնակավայրի և Ա/Զ-ի բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրագծերի վերակառուցման աշխատանքների >> աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է *<<2015թ-ի դեկտեմբերի 31-ը>>:*

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, մասերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 20 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 8.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության _2_ օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _2_օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.
3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.
4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.
5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:
4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է *7.211.400 (յոթ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր)* ՀՀ դրամ, որից *1.201.900 (մեկ միլիոն երկու հարյուր մեկ հազար ինը հարյուր)* ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
5.3Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20-ը դեկտեմբերի 2015 թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:
5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝
ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.
ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.
ԾԳՏ-ն նախահաշվով բուն աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.
ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3.կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:
6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:
6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիների համար կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է __5__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արարատի քաղաքապետարան

ՀՀ Արարատի մարզ, ք. Արարատ

Շահումյան 34

Հ/Հ 900422101478

ՀՀ ֆին. Նախ.գործառնական վարչություն

ՀՎՀՀ 04000436

Քաղաքապետ՝ Հ. Ա. Հայկյան

---------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ՆՆԱ» ՍՊԸ

Ք.Վեդի, Կայան 24

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ» ՓԲԸ

Վեդի մ/ճ

Հ/Հ 220123330429000

ՀՎՀՀ 04109073

Տնօրեն՝ Ն.Ն.Անդրեասյան

---------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 29>> հունիսի 2015թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ ԱՄՄ Ք-ԴԸԱՇՁԲ-15/12>> զնման պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
## Արարատ քաղաքի ՌԿՖ թաղամասի և Ա/Ք-ի բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրագծերի վերակառուցման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ հազար դրամ

| | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Ընդհանուրի արժեքը |
|---|---|---|---|---|---|
| | *Ջրագծի ներքին տեղամաս* | | | | |
| | **թիվ 1 շենք** | | | | |
| 1 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 2 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 59,50 | 1,24 | 73,78 |
| 3 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 63,00 | 3,06 | 192,78 |
| 4 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 18,00 | 5,01 | 90,18 |
| 5 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 6 | Խողովակների լվացում լարանազերծումով | 1000մ | 0,1225 | 65,99 | 8,08 |
| 7 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 1,225 | 8,45 | 10,36 |
| 8 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | 100 մ2 | 0,192 | 125,26 | 24,09 |
| | **թիվ 1ա շենք** | | | | |
| 9 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 10 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 19,00 | 1,24 | 23,56 |
| 11 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 20,50 | 3,06 | 62,73 |
| 12 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 6,00 | 5,01 | 30,06 |
| 13 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 14 | Խողովակների լվացում լարանազերծումով | 1000մ | 0,0395 | 65,99 | 2,61 |
| 15 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0,395 | 8,45 | 3,34 |
| 16 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | $100\ մ^2$ | 0,062 | 125,26 | 7,77 |
| | **թիվ 2 շենք** | | | | 0,00 |
| 17 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 18 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 32,00 | 1,24 | 39,68 |
| 19 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 31,50 | 3,06 | 96,39 |
| 20 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 9,00 | 5,01 | 45,09 |
| 21 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 22 | Խողովակների լվացում լարանազերծումով | 1000մ | 0,0635 | 65,99 | 4,19 |
| 23 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0,635 | 8,45 | 5,37 |
| 24 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | $100\ մ^2$ | 0,100 | 125,26 | 12,49 |
| | **թիվ 4 շենք** | | | | |
| 25 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 2,53 |
| 26 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 32,00 | 1,24 | 39,68 |
| 27 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 31,75 | 3,06 | 97,16 |
| 28 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 9,00 | 5,01 | 45,09 |
| 29 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 30 | Խողովակների լվացում լարանազերծումով | 1000մ | 0,06375 | 65,99 | 4,21 |
| 31 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0,6375 | 8,45 | 5,39 |
| 32 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | $100\ մ^2$ | 0,100 | 125,26 | 12,54 |
| | **թիվ 8 շենք** | | | | |
| 33 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 34 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 34,00 | 1,25 | 42,50 |
| 35 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 1,50 | 3,06 | 4,59 |
| 36 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 9,00 | 5,01 | 45,09 |
| 37 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 38 | Խողովակների լվացում լարանազերծումով | 1000մ | 0,0355 | 65,99 | 2,34 |
| 39 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0,355 | 8,45 | 3,00 |
| 40 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | $100\ մ^2$ | 0,056 | 125,26 | 6,98 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **թիվ 9 շենք** | | | | |
| 41 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 42 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 17,00 | 1,25 | 21,25 |
| 43 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 15,75 | 3,06 | 48,20 |
| 44 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 5,00 | 5,01 | 25,05 |
| 45 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 46 | Խողովակների լվացում ջրաօդազերծումով | 1000մ | 0,0328 | 65,99 | 2,16 |
| 47 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0,328 | 8,45 | 2,77 |
| 48 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | 100 $մ^2$ | 0,051 | 125,26 | 6,44 |
| | **թիվ 10 շենք** | | | | |
| 49 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 50 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 72,25 | 1,25 | 90,31 |
| 51 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 63,00 | 3,06 | 192,78 |
| 52 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 19,00 | 5,01 | 95,19 |
| 53 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 54 | Խողովակների լվացում ջրաօդազերծումով | 1000մ | 0,1353 | 65,99 | 8,93 |
| 55 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 1,353 | 8,45 | 11,43 |
| 56 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | 100 $մ^2$ | 0,212 | 125,26 | 26,60 |
| | **թիվ 11բ շենք** | | | | |
| 57 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 2,53 |
| 58 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 18,25 | 1,25 | 22,81 |
| 59 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 19,50 | 3,06 | 59,67 |
| 60 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 5,00 | 5,01 | 25,05 |
| 61 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 62 | Խողովակների լվացում ջրաօդազերծումով | 1000մ | 0,0378 | 65,99 | 2,49 |
| 63 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0,378 | 8,45 | 3,19 |
| 64 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | 100 $մ^2$ | 0,059 | 125,26 | 7,42 |
| | **Նայրատյան զանգված 4 շենք** | | | | |
| 65 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 66 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 8,00 | 1,25 | 10,00 |
| 67 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 23,00 | 3,06 | 70,38 |
| 68 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 6,00 | 5,01 | 30,06 |
| 69 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 70 | Խողովակների լվացում ջրաօդազերծումով | 1000մ | 0,0310 | 65,99 | 2,05 |
| 71 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0,310 | 8,45 | 2,62 |
| 72 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | 100 $մ^2$ | 0,049 | 125,26 | 6,10 |
| | **Նայրատյան զանգված 5 շենք** | | | | 0,00 |
| 73 | ²Ýóù»ñÇ µ³óáõÙ å³ï»ñáõÙ մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100հատ | 0,01 | 505,12 | 5,05 |
| 74 | Մետաղական խողովակների անցկացում 25*2.5մմ | մ | 13,00 | 1,25 | 16,25 |
| 75 | Մետաղական խողովակների անցկացում 76*2.5մմ | մ | 35,00 | 3,06 | 107,10 |
| 76 | Փականների տեղադրում մինչև d= 25մմ | հատ | 10,00 | 5,01 | 50,10 |
| 77 | Միացում գոյություն ունեցող գծին d= 25մմ | 1 միաց. | 1,00 | 7,56 | 7,56 |
| 78 | ÊáÕáí³ÏÝ»ñÇ Éí³óáõÙ ç³ï³½»ñÍáõÙáí | 1000մ | 0,0480 | 65,99 | 3,17 |
| 79 | Ð³Ù³Ï³ñ·Ç ÑÇ¹ñ³íÉÇÏ ÷áñÓ³ñÏáõÙ | 100մ | 0,480 | 8,45 | 4,06 |
| 80 | Մետաղական խողովակների ներկում սուրիկով 2 անգամ | 100 մ2 | 0,075 | 125,26 | 9,44 |
| | | | | | |
| | **Կոյուղու ներքին տեղամաս** | | | | |
| | **թիվ 1 շենք** | | | | |
| 81 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,03 | 505,12 | 15,15 |
| 82 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 26,75 | 1,16 | 31,03 |
| 83 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 4,00 | 1,85 | 7,40 |
| 84 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 35,00 | 2,29 | 80,15 |
| 85 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,80 | 13,18 | 10,54 |
| 86 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,50 | 14,82 | 7,41 |
| 87 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 1,20 | 25,58 | 30,70 |
| | **թիվ 1ա շենք** | | | | |
| 88 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,02 | 505,12 | 10,10 |
| 89 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 12,50 | 1,16 | 14,50 |
| 90 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 3,25 | 1,85 | 6,01 |
| 91 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 25,50 | 2,29 | 58,40 |
| 92 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,70 | 13,18 | 9,23 |
| 93 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,30 | 14,82 | 4,45 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 94 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 0,40 | 25,58 | 10,23 |
| | **թիվ 2 շենք** | | | | |
| 95 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,02 | 505,11 | 10,10 |
| 96 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 27,75 | 1,16 | 32,19 |
| 97 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 7,50 | 1,85 | 13,88 |
| 98 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 41,25 | 2,29 | 94,46 |
| 99 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,90 | 13,18 | 11,86 |
| 100 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,40 | 14,82 | 5,93 |
| 101 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 0,80 | 25,58 | 20,46 |
| | **թիվ 4 շենք** | | | | |
| 102 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,03 | 505,12 | 15,15 |
| 103 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 18,00 | 1,16 | 20,88 |
| 104 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 4,00 | 1,85 | 7,40 |
| 105 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 48,75 | 2,29 | 111,64 |
| 106 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,80 | 13,18 | 10,54 |
| 107 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,50 | 14,82 | 7,41 |
| 108 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 0,70 | 25,58 | 17,91 |
| | **թիվ 8 շենք** | | | | |
| 109 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,03 | 505,12 | 15,15 |
| 110 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 13,00 | 1,16 | 15,08 |
| 111 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 4,00 | 1,85 | 7,40 |
| 112 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 49,50 | 2,29 | 113,36 |
| 113 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,70 | 13,18 | 9,23 |
| 114 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,50 | 14,82 | 7,41 |
| 115 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 0,70 | 25,58 | 17,91 |
| | **թիվ 9 շենք** | | | | |
| 116 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,03 | 505,11 | 15,15 |
| 117 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 13,00 | 1,16 | 15,08 |
| 118 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 4,00 | 1,85 | 7,40 |
| 119 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 48,75 | 2,29 | 111,64 |
| 120 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,70 | 13,18 | 9,23 |
| 121 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,50 | 14,82 | 7,41 |
| 122 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 0,70 | 25,58 | 17,91 |
| | **թիվ 10 շենք** | | | | |
| 123 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,75 | 505,11 | 378,83 |
| 124 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 33,25 | 1,16 | 38,57 |
| 125 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 8,00 | 1,85 | 14,80 |
| 126 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 142,50 | 2,29 | 326,33 |
| 127 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 1,40 | 13,18 | 18,45 |
| 128 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 1,10 | 14,82 | 16,30 |
| 129 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 1,30 | 25,58 | 33,25 |
| | **թիվ 11բ շենք** | | | | |
| 130 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,02 | 505,11 | 10,10 |
| 131 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 4,75 | 1,16 | 5,51 |
| 132 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 2,50 | 1,85 | 4,63 |
| 133 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 35,50 | 2,29 | 81,30 |
| 134 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,40 | 13,18 | 5,27 |
| 135 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,30 | 14,82 | 4,45 |
| 136 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 0,50 | 25,58 | 12,79 |
| | **[illegible]այրապետյան զանգված 4 շենք** | | | | |
| 137 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,30 | 505,11 | 151,53 |
| 138 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 18,00 | 1,16 | 20,88 |
| 139 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 2,50 | 1,85 | 4,63 |
| 140 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 19,50 | 2,29 | 44,66 |
| 141 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 0,60 | 13,18 | 7,91 |
| 142 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,30 | 14,82 | 4,45 |
| 143 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 0,50 | 25,58 | 12,79 |
| | **[illegible]այրապետյան զանգված 5 շենք** | | | | |
| 144 | Անցքերի բացում պատերում մինչև 50մմ տրամագծով պատի հաստ. մինչև 51սմ | 100 հատ | 0,03 | 505,12 | 15,15 |
| 145 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d= 50մմ | մ | 30,00 | 1,16 | 34,80 |
| 146 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ | մ | 4,00 | 1,85 | 7,40 |
| 147 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 32,50 | 2,29 | 74,43 |
| 148 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=50մմ | 10հատ | 1,00 | 13,18 | 13,18 |
| 149 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=110մմ | 10հատ | 0,50 | 14,82 | 7,41 |
| 150 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում d=160մմ | 10հատ | 1,00 | 25,58 | 25,58 |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Կոյուղագծի արտաքին տեղամաս | | | | |
| | **թիվ 1 շենք 5 կոյուղահոր** | | | | |
| 151 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 9,50 | 2,44 | 23,18 |
| 152 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,05 | 253,66 | 12,68 |
| 153 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,50 | 5,64 | 8,46 |
| 154 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 25,00 | 2,29 | 57,25 |
| 155 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 8,00 | 1,24 | 9,92 |
| | **թիվ 1ա շենք 4 կոյուղահոր** | | | | |
| 156 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 7,60 | 2,44 | 18,54 |
| 157 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,04 | 253,66 | 10,15 |
| 158 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,20 | 5,64 | 6,77 |
| 159 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 20,00 | 2,29 | 45,80 |
| 160 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 6,40 | 1,24 | 7,94 |
| | **թիվ 2 շենք 5 կոյուղահոր** | | | | |
| 161 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 9,50 | 2,44 | 23,18 |
| 162 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,05 | 253,66 | 12,68 |
| 163 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,50 | 5,65 | 8,48 |
| 164 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 25,00 | 2,29 | 57,25 |
| 165 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 8,00 | 1,24 | 9,92 |
| | **թիվ 4 շենք 6 կոյուղահոր** | | | | 0,00 |
| 166 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 11,40 | 2,44 | 27,82 |
| 167 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,06 | 253,66 | 15,22 |
| 168 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,80 | 5,65 | 10,17 |
| 169 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 30,00 | 2,29 | 68,70 |
| 170 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 9,60 | 1,24 | 11,90 |
| | **թիվ 8 շենք 6 կոյուղահոր** | | | | |
| 171 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 11,40 | 2,44 | 27,82 |
| 172 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,06 | 253,66 | 15,22 |
| 173 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,80 | 5,65 | 10,17 |
| 174 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 30,00 | 2,29 | 68,70 |
| 175 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 9,60 | 1,24 | 11,90 |
| | **թիվ 9 շենք 6 կոյուղահոր** | | | | |
| 176 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 11,40 | 2,44 | 27,82 |
| 177 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,06 | 253,66 | 15,22 |
| 178 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,80 | 5,65 | 10,17 |
| 179 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 30,00 | 2,29 | 68,70 |
| 180 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 9,60 | 1,24 | 11,90 |
| | **թիվ 10 շենք 15 կոյուղահոր** | | | | |
| 181 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 28,50 | 2,44 | 69,54 |
| 182 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,15 | 253,66 | 38,05 |
| 183 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 4,50 | 5,65 | 25,43 |
| 184 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 75,00 | 2,29 | 171,75 |
| 185 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 24,00 | 1,24 | 29,76 |
| | **թիվ 11բ շենք 4 կոյուղահոր** | | | | |
| 186 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 7,60 | 2,44 | 18,54 |
| 187 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,04 | 253,66 | 10,15 |
| 188 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,20 | 5,65 | 6,78 |
| 189 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 20,00 | 2,29 | 45,80 |
| 190 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 6,40 | 1,24 | 7,94 |
| | **Արարատյան զանգված 4 շենք 6 կոյուղահոր** | | | | |
| 191 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 11,40 | 2,44 | 27,82 |
| 192 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,06 | 253,66 | 15,22 |
| 193 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,80 | 5,65 | 10,17 |
| 194 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 30,00 | 2,29 | 68,70 |
| 195 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 9,60 | 1,24 | 11,90 |
| | **Արարատյան զանգված 5 շենք 6 կոյուղահոր** | | | | |
| 196 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 11,40 | 2,44 | 27,82 |
| 197 | Անցքերի բացում կոյուղահորերում | 100հտ | 0,06 | 253,66 | 15,22 |
| 198 | Ավազե շերտի իրականացում 15սմ հաստությամբ | $մ^3$ | 1,80 | 5,65 | 10,17 |
| 199 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=160մմ | մ | 30,00 | 2,29 | 68,70 |
| 200 | Բնահողի ետլիցք ձեռքով | $մ^3$ | 9,60 | 1,24 | 11,90 |
| | Ընդամենը | | | | 5950,00 |
| | Շահույթ 1% | | | | **59,50** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | | | | 6009,50 |
| | Ա.Ա.Հ. 20% | | | | | 1201,90 |
| | Ընդհանուրը | | | | | 7211,40 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արարատի քաղաքապետարան
Հ Արարատի մարզ, ք. Արարատ
Շահումյան 34
Հ/Հ 900422101478
ՀՀ ֆին. Նախ.գործառնական վարչություն
ՀՎՀՀ 04000436
Քաղաքապետ՝ Հ. Ա. Հայկյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՆՆԱ» ՍՊԸ
Ք.Վեդի, Կասյան 24
«Արդշինբանկ» ՓԲԸ Վեդի մ/ճ
Հ/Հ 2477600194600000
ՀՎՀՀ 04109073
տնօրեն՝ Ն.Ն.Անդրեասյան

*Հավելված թիվ 2*
*<< 29 >> հունիսի 2015 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ <<ՀՀ ԱՄԱՔ-ՊԸԱԾՁԲ-15/12>> գնման պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

<< Արարատ քաղաքի ՌԿՖ բանավանի բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրագծերի վերակառուցման >> ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կատարողի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Մեկնարկը | Ավարտը |
| 1 | Արարատ քաղաքի ՌԿՖ բանավանի և Ա/Զ-ի բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրագծերի վերակառուցման աշխատանքներ | Պայմանագրի կնքման օրից | Հոկտեմբերի 31-ը |
| 2 | | | |
| 3 | | | |
| 4 | | | |
| 5 | | | |
| ... | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Արարատի քաղաքապետարան
ՀՀ Արարատի մարզ, ք. Արարատ
Շահումյան 34
Հ/Հ 900422101478
ՀՀ ֆին. Նախ.գործառնական վարչություն
ՀՎՀՀ 04000436
Քաղաքապետ՝ Հ. Ա. Հայկյան

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ՆՆԱ» ՍՊԸ
Ք.Վեդի, Կասյան 24
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ» ՓԲԸ
Վեդի մ/ճ
Հ/Հ 220123330429000
ՀՎՀՀ 04109073
Տնօրեն՝ Ն.Ն.Անդրեասյան

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված թիվ 3*
*<< 29 >>հունիսի 2015 թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ <<ՀՀ ԱՄԱՔ-ՊԸԱՇՁԲ-15/12>> գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Արարատ քաղաքի ԿՖ բանավանի և Ա/Զ-ի բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրագծերի վերակառուցման աշխատանքներ | ... | ... % | ... % | ... % | ... % | ... % | 40 % | 60 % | 80 % | 90 % | 100 % | ... % | 100 % |
| 2. | | | | | | | | | | | | | | |
| 3. | <<Աշխատանքների անվանումները>> | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| . | <<Աշխատանքների անվանումները>> | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Արարատի քաղաքապետարան
ՀՀ Արարատի մարզ, ք. Արարատ
Շահումյան 34
Հ/Հ 900422101478
ՀՀ ֆին. Նախ.գործառնական վարչություն
ՀՎՀՀ 04000436
Քաղաքապետ՝ Հ.Ա. Հայկյան

---------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ՆՆԱ» ՍՊԸ
Ք.Վեդի, Կայան 24
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼԲԱՆԿ» ՓԲԸ
Վեդի մ/ճ
Հ/Հ 220123330429000
ՀՎՀՀ 04109073
Տնօրեն՝ Ն.Ն.Անդրեասյան

---------------------
(ստորագրություն)
Կ.Տ